Գործ թիվ ԵԴ/2670/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

16.02.2023թ. *ք. Երևան*

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ.Ստեփանյանս, ուսումնասիրելով <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

ՊԱՐԶԵՑԻ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ն 23.01.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից ՀՀ Տավուշի մարզպետարանի 2023 թվականի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 14.12.2022թ. հայտարարված թիվ <<ՀՀՏՄ-ԷԱՃՄՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2023թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով կայացված որոշումները, 10.01.2023թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և <<ՀՀՏՄ-ԷԱՃՄՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

25.01.2023թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Դատարանի 26.01.2023թ. որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

09.02.2023թ. հայցադիմումը կրկին հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից ՀՀ Տավուշի մարզպետարանի 2023 թվականի կարիքների համար ներքին աուդիտի ծառայության ձեռքբերման նպատակով 14.12.2022թ. հայտարարված թիվ <<ՀՀՏՄ-ԷԱՃՄՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.01.2023թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով կայացված որոշումները, 10.01.2023թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և <<ՀՀՏՄ-ԷԱՃՄՁԲ-23/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը

չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն դիմումը դատարանում ընդունված համարել սկզբնական ներկայացման օրը:

ԴԱՏԱՎՈՐ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ